Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/8863/02/23**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03.07.2024թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Թ. Ղուկասյանս (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով թիվ ԵԴ2/8863/02/23 քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի՝ «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 31.05.2023 թվականի ՀԱՊՀ-2023/1 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Դատարանի (նախագահող դատավոր Ա. Շիլաջյան) 28.06.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և պատասխանողից պահանջվել է ներկայացնել գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանի (նախագահող դատավոր Ա. Շիլաջյան) 10.08.2023 թվականի վճռով «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի՝ «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 31.05.2023 թվականի ՀԱՊՀ-2023/1 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժվել է:

Վերոնշյալ վճռի դեմ հայցվորի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել Վերաքննիչ դատարան:

Վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր Ս. Սահակյան, դատավորներ՝ Մ. Հարթենյան, Լ. Գրիգորյան) 27.09.2023 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Պատասխանող «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 12.10.2023թ. Վերաքննիչ դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոքի պատասխան: Վերաքննիչ դատարանը 12.03.2024 թվականի որոշել է թիվ ԵԴ2/8863/02/23 քաղաքացիական գործով հայցվոր «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքը քննել գրավոր ընթացակարգով, դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2024 թվականի մարտի 27-ը:

Վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր Ս. Սահակյան, դատավորներ՝ Մ. Հարթենյան, Լ. Գրիգորյան) 27.03.2024թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝

բեկանվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/8863/02/23 քաղաքացիական գործով 10.08.2023թ. վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Սույն քաղաքացիական գործը մակագրվել է դատավոր Թաթուլ Ղուկասյանիս 24.06.2024 թվականին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 28.06.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ *պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:*

2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացիական գործն՝ ըստ հայցի՝ «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի՝ «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 31.05.2023 թվականի ՀԱՊՀ-2023/1 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 15.08.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**